

ԵՐԽՈՒՄ



Օ Ր Ա Գ Ի Ր Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Թ Ի Ի Տ.

1861

Գ. ՀԱՏՈՐ

Լ Ի Ի Գ Ի Ն

ՄԱՐԿՈՍ ԱՌԻՆԴԻՈՍ ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ՆԿԱՐԱԳԻՐ ՄԸ



Գ Լ Ո Ւ Խ Բ.

Երկրաշարժ:

տորերկրեայ տարրը կայծակի երա-
գութեամբ Զմիւռնիոյ մեծ ճամբուն
երկայնութիւնը շրջապատելով հոլ-
վեցաւ. տունէ տուն երերում տա-
տանում պատճառեց, պալատները
կը դողային, բարձր աշտարակները
գլուխներ կը ծռէին, գլեակները կը
ճեղքուէին, ճամբաները տախտակ-
վայ եղան, քաղաքը աւերակ
դարձաւ:

Ամէն մարդ դուրս ցալթելու եւ խուսափելու
կը նայէր. որը օգնութիւն կը պոռար. որը թաւալ-
գլոր կու գար: Մէկ մեծ մաս մ'ալ գոչին ու
վայնասուն փրցընելով նաւերը կ'ապաստանէին, ու-
րիշները շրջակայ դաշտերը կը ցրուէին, ու բարձր
լեռներու վրայ իրենց ապահովութիւնը կը փնտռէին:
Ամէն մարդ ոտքի վրայ էր, ամէն բան շարժման մէջ
էր, իրար կը կոխկըտէին, մութը իրենց արճաւիթքը
ու զարհուրանքը կը սաստկացընէր: Յուսահատու-
թիւնը ծայրէ ծայր տիրած էր: «Դուք Աստուածք օգ-
նութեան, օգնութեան հասէք», կ'ողաղակէր ժողո-
վուրդը. «ալ կորանք, ալ լմնցանք»:

Քաղքին վերի գիւղերը գետ քանդուած չէր,
այն միապաղաղ կռածոյ շէնքերը, գլխաւորաբար տա-
ճարները նոյն կատաղի զօրութեան առջին ալ գիմա-
ցան: Հատերուն սրտի անձկութիւնը ու սարսափը,
նուիրական տեղեր չաստուածոց արձաններու քով
ապաւինելու ստիպած էր, Հոմերոսի մեծ տաճարին
մէջ բազմութիւնը խիտ առ խիտ դիզուած էին:

Յանկարծ երկրորդ ու երրորդ հարուածը վրայ
եկաւ. ու քիչ մը շունչ տալէն ետեւ, խուլ դոփիւն
մը սարսեց ու դողացուց անձուկ ու նեղ փողոցներն
ու քաղքին ամենէն հեռու կողմերը տարածեցաւ. —
Զմիւռնիա իր քանի մը մասերն ի բաց առեալ, բո-
վանդակ կործանեցաւ:

Աղմուկն ու շփոթը վերջի ծայրն հասաւ: Գի-
ղուած փրատակներուն համար փախչելն ալ անկարելի

եղաւ: Ամէն մարդ ինք զինքը նեղ անձուկի մը մէջ
փակուած բռնուած տեսաւ: Կնկտիք ու մարդիկ, ի-
րենց տներուն մնացորդներուն տակ ինկած կը ճչէին.
ահն ու երկիւղը խելքերնին առած էր: Ճմլած ջախ-
ջախուածներէն հարիւրաւոր անձինք փողոցներու վրայ
փռուած էին, վերաւորաց թիւն ու համրանքը չկար,
ասոնց հեծութիւնն ու կոծը ամենուէն սիրտը կը զկծե-
ցընէր. կէս ջախջախուողներն ու պատերու տակ կէս
թաղուողներն իրենք զիրենք չէին կրնար աղատել:

Ձեռքը ջահ մը անցընել կըցողը, իր ճամբան
կրնար յառաջ տանիլ պրծիլ. բայց շատ տեղ ան ալ
անկարելի կ'ըլլար, ահագին փրատակներուն ու վեր
ելած փուշոյն ու շոգւոյն պատճառաւ: Իսկ ուր որ
աւերն ու քանդումը ճամբաներ ու հրապարակներ
բանալով անցուղարձք քիչ մը դիւրընցուցած էր,
չորս կողմը տիրող մթաղնութեան մէջէն ջահերուն
արիւնաներկ կարմրութիւնը նորանշան տեսք մը կ'ըն-
ծայէր: Բայց վառուած ջահերով անհաստատ մէկ
դիէն մէկալ դին շարժիլն ալ, ինչպէս նա եւ անե-
րու մէջ բաց կրակարաններու, ամաններու ու ճրագ-
ներու մէկէն կործանիլ փլչելն ու փլչիլն ալ ուրիշ
զարհուրելի հետեւութիւն մը յառաջ կը բերէր:
Քաղքին գրեթէ ամէն մասին մէջ կրակ ինկաւ ու
զարմանալի երազութեամբ չորս դին գտնուող տները
փորձեցուց: Կը կարծուէր որ վերնայարկէ մը ելած
ըլլայ: Այսպէս քիչ ատենուան մէջ քաղքին վերի
մասն ալ բոցերու հեղեղ մը ձեւացաւ: Ամէն մարդ
մէյմէկ նոր դժբախտութեան արկած մը կը պատ-
մէր, ալ կը կարծուէր որ աշխրբիս կատարածն հա-
սած է, ու երկրիս շրջապատը հրով սպառի պիտ'որ:

Ստատիոս Կուադրատոս բղեաշիւր կը կարծէր
որ իր ապարանքին մէջ ապահով է. բայց անոր յոյսն
ալ պարապի ելաւ: Ինչու որ երբոր իր տան վերի
դստիկոնը ծնկան վրայ եկած իր աստուածոցը հեծե-
ծելով կ'ողաչէր՝ որ իրեն խնայեն, անդգալի երա-
գութեամբ մը պալատը կայծ մը ինկաւ ու առաստաղը
լուսաւորեց: Դժբախտը զարհուրած ուր փախչիլը
չէր գիտեր. վերջապէս ինք զինքը այնպիսի տեղ մը
ձգեց, ուսկից աղատելու յոյս չկար: Ինք զինքը վար
նետել կը մտածէր, բայց կը վախնար որ կտոր կտոր
կ'ըլլայ: Տասը հազար հռոմայեցի սեստերտ խոս-
տացաւ զինքը աղատողին, բայց իր ձայնը խուլ պա-
տերը միայն կը լսէին: Արդէն օձաձեւ կրակը
գլխին վրայ լեզուն կը խաղցընէր, կը շէր, կը սուլէր
ու վրան կը գալարէր. — ճիշն ու մեղմ հեծե-
ծանքը Կուադրատոսին ոգեսպառ ու հատկութեալ ետքի
շունչներն էին, որն որ ետքէն բոլորովին նոյն կրակին
ճարակն եղաւ:

Մինչուհի հիմակ յիշուած աւերին ու քանդումին առեւեր, Զմիւռնիոյ բնակչաց տասներորդ մասին հետ չափելու անուամբ Հոմերոս բանաստեղծին պատուոյն նուիրուած մեծ սիւնաղարդ սրահին մէջ ապաւինող հազարաւոր մարդիկ, ձեռքներ պատռտելէն ու սիւնները կործանուելէն, բոլոր ջարդ ու փութիւն եղան: Եւ՝ որն որ անհաւատալի կ'երեւայ՝ նոյն իսկ Հոմերոսի պղծնէն արձանը վարէն վեր ձեռքուած էր *:

Անոնք աւերի բախտաւոր էին, որոնք որ քրիստոնէից պէս նաւերու մէջ ապաւինած էին, որոնց մէջ Քարիտանէն ալ կը գտնուէր, որոնք ասեմին նաւ մտած, ժամանակին բաց ծովին վրայ հեռացած էին: Ինչու որ աս երկրաշարժին ժամանակ ծովը բոլորովին խաղաղ էր: Բայց քիչ մը ետքը կ'երեւայ որ հրաբուխային զօրութիւն մը ծովին տակէն պորտկաց ու այն ապականութիւնը որն որ ասկից յառաջ պիտ'որ դար, դժբախտութեան վերջին ծայրն էր:

Սաստիկ ցնցումներէն երկու ժամ ետքը ծովը շերտաւոր գետաբերաններուն քով ուռիլ բարձրանալ սկսաւ: Թէեւ ջրերու նուազութիւնը կամ տեղատուութիւնը սկսած էր, ի վերայ այս ամենայնի արդատութիւնը սկսած էր, ի վերայ այս ամենայնի արտաքոյ կարգի շուտութեամբ մը մակընթացութեան վերջի աստիճանը հասաւ, փրփրացող ամէն հալքները մինչուհի քաղքին ճամբաները հասան: Քարեղէն հրուանդանը՝ ուր շուրջ 6000 հոգի ասդին անդին տարածուած էր, մէկէն ջրով ծածկուեցաւ: Աս ալ բաւական չէ, ջրերու յոյն ու սաստիկութիւնը աներեւոյթ զօրութեան մը ան աստիճանի գրգռեցաւ՝ որ մնացած քանի մը բարձր շէնքերէն ալ վեր ելաւ, եւ 80 ոտք բարձրութեան հասաւ **: Զմիւռնիա աւերակ դարձած էր, բնակիչքը պարապ տեղ բոցերու դադրեցնելու կը ջանային, մինչուհի որ ծովու ջրերուն անընդհատ յուզմունքը բարձր կոհակներով, այն բռնկած տեղերուն զարնելով, անթիւ անհամար հրեղէն սիւններ կազմեցին ու մթադոյն մոխիւն անդունդը զսպեցին: Ծովը՝ հազարաւոր մարդկան դիակներու աւարն հետն առած, կամաց կամաց սկսաւ ետ քաշուիլ, ու իր տղմուտ յատակն երեւցնել: Աս երեւոյթը զանազան անգամ կրկնուեցաւ. եւ առջի յարձակման մէջ չհասուցած մնասը՝ երկրորդին կամ երրորդին կը հանգիստընէր: Ամէն տեղերէն աւերի մնասուածը ծովախորշին կողմն էր, ուր զուարճութեան յարմար տներ ու փառաւոր պալատներ, քիչ վայրկենի մէջ իրենց խել մը բնակիչներով մէկտեղ, բաւարարաց չնոյն կամ յորանջող անդունդը իջան: Նաւերուն մեծ մասը քայքայած էր, եւ իրենց մնացորդը քաղքին փողոցներուն թաց հողակոյտին վրայ դեռ կը ծփային: Թէտորոնին մէջ տեղը, որուն մէկ կողմը քանդուած էր, բաւական մեծութեամբ նաւ մը պառկած կը կենար:

Այսպիսի սոսկալի արհաւիրներով անցաւ նոյն գիշերը, առաւօտը երբոր սկսաւ սպիտականալ, երկիրն ու ծովը իրենց կատարեալ անդորրութիւնը դտած էին: Ահա ու վախը փարատեցան: Իսկ իրենց կենքերը աղատողները, թէ եւ բոլոր իրենց ինչքն ու ստացուածքը կորսնցուցած էին, բայց անանկ ալ իրենք զիրենք նախանձելի բախտաւոր մարդիկ կը համարէին: Մէկգլմէկ կը գրկէին ու քաշած կորստանին իրարու կը պատմէին: Յնձութիւնն ու հեծութիւնը մէկտեղ

կը խառնուէր. ուրախութեան ու հեծեծանաց ձայներն երբեք ասանկ դառն բաղադրութիւն մը ձեւացուցած չէին: Մի եւ նոյն տեղը հայր մը իր որդւոյն դիակին քով նստած կ'ողբար, ուրիշ բախտաւոր երիտասարդ մ'ալ իր նորէն տեսած բարեկամը կը գրկէր: — —

Նրբոր աս տեսարաններն ամէն կողմ կերպ կերպ իրարու կը յաջորդէին, լեռան վերեւը դեռ միող պալատի մը աւերակին առջին՝ գունատ ու սպիտակատեսիլ օրիորդ մը կը պտտէր, պատմութեան ձերմակ, ձեռքը քար մը առած կը տանէր, որուն վրայէն շղթայ մը դէպ ի վար կը կախուէր: Մէկէն կանկ առաւ կայնեցաւ. իր սեւաւ աչկունքը հանդարտ ասդին անդին պտտեցնելով, խորունկ մտադրութեամբ մը դէպ ի կործանած քաղաքը կը նայէր, կը զննէր ու քիչ մը հեռու հայելիի պէս ծովին երեսը կը նշմարէր: Առաւօտեան արեւուն ճառագայթը աւերաւոր պատմութեանը կը շողացնէր, եւ իր պայծառ ոսկի նշոյններով կը նկարէր: Նոյն տեղը իրեք կ'ապշեցընէր: Բայց իր կերպարանքին վրայ սարսափ կամ երկիւղ չէր նշմարուէր, այլ լռիկ յանձնառութեան դրոշմ՝ այն կամքին հետ, որն որ երկրագունդը իրեն ոտքին պատուանդան ըրած է:

Իր քայլերը դէպ ի ուր կողմը շտկելու տարտամ կ'երեւար. աս միջոցին մէկէն մարդուն մէկը դէպ իրեն ուղղուեցաւ, անոր խորշումած ծակտին վրայ դեռ չարադէպ արկածի մը հետքեր կը նշմարուէին. Իրենէնոն էր անի որ շտապով իրեն մօտեցաւ ու կենդանի զարմանք մը ցուցնելով ըսաւ. «Գուն դեռ հոս ես, Սերափիկէ: Կալանաւորն ասանկ աղաւտեղ, մահուան զոհը դիակաց վրայ պտտի: Ի՞նչ ըսել ե...»:

Սերափիկէ մարդուն աչքը նայեցաւ, ու մեղմ ծանրութեամբ մը պատասխանեց. «Հա, Իրենէնոս, կալանաւոր գերութեան քակուեցաւ: Մահուան երթալու զրոյցը ինծի ծանուցուելէն ետեւ, բանտին պատերը մէկը սարսեց, շարժեց, լայն ձեւը բռնեցնէր բացուեցան, իմ բանաս իր որմերն բացին, — ես ալ դուրս ելայ: Հոս կեցեր քաղքի մը աղիողորմ կերպարանքը կը զննեմ, որուն շնաշխարհիկ փառաւորութիւնը երկրի վրայէն չէր աչաց աներեւոյթ եղեր է: Քանի մը շէնքեր դեռ կը տեսնեմ կոր, որ կը կործանին կ'իշնան: Իրենէնոս, հոն քանի մը ճամբաներ կ'երեւան, ահա մօրս բնակած տունը ասի չէ՞ մի, յարգոյ վարդապետ, գիտե՞ս արդեօք ո՞ր է. ո՞ր է իմ մայրս, որն որ ամէն բանէն աւերի պէտք եմ փնտռել: — Արդեօք մեռնողներուն՝ չէ նէ կենդանի մնացողներուն մէջ փնտռելու եմ»,:

«Պէտք չէս զարհուրիլ, պատասխանեց Իրենէնոս, թէ որ լսելու ըլլաւ որ ուրիշներուն վատաբախտ չարքն անոր գլխուն ալ եկաւ: Բայց չէ, Սերափիկէ, քու մայրդ կենդանի է, անի աղատած է, բայց աղատած գերութեամբ: Աս գիշեր տեսայ զինքը որ նաւերուն կ'երթար կոր: Ինքը՝ ու իր հաւատակից ընկերները Հուով կը տարուէին: Բայց դուն զքեզ աղատելու մ'ուշանար: Կապանքդ կը ցուցնէ որ դուն գերի եիր»,:

Դամ մը վերջը Սերափիկէ նաւահանգստին մէջ անմասն մնացած նաւու մը տախտակամաններուն վրայ տեսնուեցաւ, որն որ դէպ ի Յունաստան կը նաւարկէր: Կապերը մէկ դի առնուած էին. ոչ զբիւնացաւ թէ՛ ինչպէս նոյն ճանապարհորդներուն մէջ ինք զինքը խառնած է:

Մէկ մ'ալ դարձաւ նայեցաւ, ալ վերջի անգամն էր, — այն քաղքին մնացորդներուն, ուր չմոռցուելու

* Սենեկա «Ինտութեան խորհրդածութիւն» ըսուած վեցերորդ գրքին մէջ աս դէպքը կը յիշատակէ:

** Լիմայի երկրաշարժէն ետքը, (28 Հոկտ. 1746) գիշերը 10 1/2 ժամ 80 ոտք իր միջին բարձրութենէն վեր ելաւ. Բատիքսի մէջ՝ 60, Լիսապոն՝ 40 ոտք:

արժանի մանկութեան օրերն անցուցած ու կրթութիւնը առած էր: Բլրի մը դուրս ցցուած կողմը, կէս քանդուած անակ մը նշմարեց, բայց արմաւենիի ծառերն, որոնք երբեմն հոն կը կենային, չէին տեսնուեր. նա եւ փոքրիկ պարտեզ մ'ալ աներեւոյթ եղած էր: Սերափիկէ հազիւ թէ աս տեղոյն իր ետքի հրաժարականը պիտ'որ տար, երերալ սկսաւ ու մէկէն պատերը կործանեցան. — իր հայրենական տունն էր:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Մետեղղա:

Այն զարմանագեղ հրապուրիչ երկիրը՝ Ատտիկէ, որուն վրայ բանաստեղծներն այնչափ վիպասանեցին, հիմակ մեր պատմութիւնը կարդացողները կը փոխադրենք. ան աշխարհը՝ որն որ երբեմն անուանի զօրավարներու եւ օրէնսդիրներու հայրենի գաւառն էր, փիլիսոփայութեան խանձարուրք, մուսայից օթարան, եւ ուրիշ բարձրագոյն տեսական աշխարհքի մը հաւատացողներու ապակէնք:

Թէպէտ Աթէնք՝ արդէն իր համբաւուն ծայրը անցած էր, ու ան ատենները կը սկսէր կամաց կամաց վար իջնալու, անոր համար ալ հին ատենուան բոլոր մտաւոր գիւտերուն ստացումը ձեռքն էր, ու իր հարցը մտածութեանցն ու գործողութեանց գեղեցիկ գեղեցիկ պտուղները կը վայելէր: Ճշգիւ աս ժամանակը Աթէնքի պատմութեան մէջ ամենէն հասուն ու գեղեցիկ ժամանակն էր, այնպէս ինչպէս արեւը մարը մտած ժամանակ՝ ամէն ատենէն գեղեցիկն է:

Արիւնոս կայսեր ինքնակալութեան ժամանակն ալ դեռ նոր անցած էր: Իր անհուն պետութեան ամէն քաղաքներէն աւելի Աթէնքը սիրած էր: Բոլոր փառաւոր շէնքերը, Արիւնոսի կամարէն անդին եղող նոր կանոնաւոր ձաւթանները, որոնք ամէնը մէկէն իրենց բազմութեամբն ու տարածութեամբը երկրորդ քաղաք մը կը ձեւացընէին, աս կայսեր գործքերն են: Նոյն ատենուան բնակչաց թիւը 180,000ի կրնար հասնիլ: Արիւնոսի ըսուած քաղաքը, զորն որ վերջիշեալ (մինչեւ հիմա դեռ աղէկ պահուած) կամարը, հին քաղքին հետ կը միացընէ, Յունաստանի հին պատմութեան զարգացման յայտարար մըն է, որով հռոմէական կեանքը՝ հին Յունաց հետ գիրկընդխառն կապուած՝ ու երկու աղբայնութիւններն իրարու ձուլած էին:

Հին մայրաքաղքէն դուրս, գէպ ի հիւսիսային արեւելեան կողմը, բրգաձեւ, ու հիմակուան ատենս լեռ կ'ու գրեթէ մինակ փշոտ թուփեր բուսցընող լեռ մը կը բարձրանայ, որն որ Լիւկայի անկողին կ'ըսուէր: Զրոյցի մը նայելով Աթենաս՝ Աթէնքի պաշտպան շատուածուհին՝ իրեն նուիրուած Ակրոպոլիսի շինութեան համար նիւթեր ու ատաղձ պատրաստելու շատ զբաղած ատենը, Լիւկայի անկողինը իր բազկացը վրայ կը տանէր. որի մը իր չորս գին թռչելով եկաւ երկրթոնիոսի ծնունդը իրեն իմացուց: Աթենաս վախէ շփոթած, ձեռքէն նոյն լեռը Աթէնքին առջեւը վար ձգեց հոն՝ ուր դեռ հիմակ կը կենայ:

Այլ լեռան ստորոտը՝ որուն կատարը այցելութեան համար եկող անցաւորներուն քաղքին վրայ տիրող հրապուրիչ տեսք մը կը շնորհէ, եւ մինչեւ հեռուն, գէպ ի կապոյտ ծովը կ'առնու, Յունաց ու Հռոմէացեաց գերդաստաններու սիգապանձ ու խրոխտ պալատները կը բարձրանային, որոնց մէջը Մետեղղայի՝

յոյն տիկնոջ մը՝ պալատը գուցէ առջինն էր: Աս պալատը Արիւնոս կայսեր շինել տուած հին ջրմղի կամարաձեւ շինուածքին մօտերը, փառաւոր արքունական դղեկէն քիչ աւելի բարձրագոյն գիւրք մ'առնէր, անդղեկէն զօրն որ հիմայ ձամբորդները Աթէնքէն դուրս կը տեսնեն ու կը զարմանան: Արիւնոսն քաղքին ինչպէս ամէն շէնքերը նոյնպէս Մետեղղային տունն ալ հռոմէական կերպով շինուած էր, բայց եւ այնպէս յունական ազնուագոյն ձարտարապետութեան արուեստն ալ կ'երեւար: Տան առջեւի գոցուած մասին՝ վրայ՝ որն որ գաւիթ կ'ըսուէր, տան տիկնոջ անունը մարմարեայ տախտակի մը վրայ գրուած էր, մեծ դրան վրայ պղնձի արձան մը կար, որն որ յոյսը կը ներկայացընէր, տակը լատիներէն արձանագրով մը „Dum spiro spero“ = „ցորչափ կը շնչեմ՝ պիտի յուսամ“, գրուած էր:

Բակէն դուրս՝ գեղեցիկ հագուած գերի մը տան մուտքը կը պահէր: Ձեռքը արուեստաւոր կերպով շինուած բոժոժներ ունէր, զորոնք ատենին կը հնչեցընէր, անով դռնապանի մը իշխանութիւն ունենալը ցուցընելու համար: Իր քայլուածքը, ստեպ ստեպ ամէն մէկ քայլին շղթան թօթուելը, ապացոյց մըն էր, թէ ինչպէս ամբարտաւանութիւնը բնկերութեան ամէն աստիճանի մարդկան վրայ իշխելու եղանակն ու կերպը գիտէ, մինչեւ ամենաստորին ու անկիրթ՝ դրան պահապանի մը վրայ ալ:

Մետեղղա իր տանը սարփինային * վրայ մեծ հաճութեամբ ժամանակը կ'անցընէր, այսպէս կ'առանուէր այն ձողաբարձ տանիքը, որն որ ոսկեղօծ պատուանդանի մը վրայ հաստատուած էր, վրան մուլ կանաչ օթոցը, կնոջ կերպարանքով ձարտարագործ սիւներու վրայ հաստատուած էր: Մէկ երկայն բաց գունով բեհեղեայ տապաստակի մը վրայ կը բազմէր տիկինը, ու զբաղած էր պղտի մարմարեայ սեղանի մը վրայ գալարուած մագաղաթեայ գիրք մը բանալու: Հռոմայեցի բանաստեղծի մը գիրքն էր, իրեն սիրած Վիրգիլիոսին որուն հովուական վէպերը կը կարդար: Մէկէն կ'երէր, գրիչ կ'առնէր ու գեղեցիկ խօսքերէն մէկը կ'օրինակէր. գրածը նորէն աչքէ կ'անցընէր. իր մտադիր աչկունքը ու գլխին շարժուածքը ձանչցընել կու տային որ բանաստեղծին քանի մը խօսքերուն խորունկ իմաստը պայծառ չէր կրնար թափանցել: Բայց անոր քանի մը կտորները իր երեւակայութիւնը անանկ սաստիկ բուրնկցուցած էին՝ որ բարձր ձայնով մը սկսաւ նորէն կարգալ:

«Թողէք երգեմ՝ արդ երկնային
երգեր, Մուսայք Սիկեղեան.
Այն մեծ շրջան դարուց նորէն
Աւտիկ արդ կ'սկսի,
Նորէն կ'ընէ դարձ մեզի կոյսն,
Նորէն Արոմիսայ պետութիւն.
Ար բողբոջի մէկ նոր սերունդ,
Բարձրակամար երկրներէն:
Եկուր եկուր Ապաուածրդ դու,
Տուր վերջ դարիս երկաթեայ:
Դուսն կ'սկսիս մէկ ոսկեղար,
Երկիրս ամէն կը ծաղկի:
Քու ատենդ մ'Պողոթիս հիւպատ,
Պիտ'որ ծնանի իրաւքնէ,
Էոնական այն փրկութիւն,
Ու շուտ մ'անցնի այն փառաւոր
Լուսիններու լուրջ կարգին:
Ա'ըլ լան յայնժամ՝ անհետ մեր պարտքն,
Արհաւիրէ աղատ երկիր:
Ա'ընդունի նա կեանք աստուածոց,
Ու գիւցաղունը կը տեսնէ
Աստուածներու հետ ընկերած,

* Pergula.

Եւ անոնց քով միշտ ներկայ:
Նա ծոխութեամբ Աստուածեղէն,
Իբրեւ իշխան կը տիրէ,
Ու կը վարէ բոլոր աշխարհը,
Որ թշնամի էր եղած:
Ան ընկալ շուք բարձրական,
Ատենն հասաւ մերձեցաւ,
Ո՛տիրելի մանուկ դից,
Արամսդոյս մեծ զաւակ:
Տես տիեզերք բեռնած, ընկճած
Լեռնանման բեռն տակ,
Հոս երկիրներ, հոն ծովուն դաշտ,
Եւ երկրներն խորութիւն:
Ո՛հ կ'սպասեն ամէնք դալու
Ուրախալից այն դարուն:
Ո՛հ թէ կենացս իմ՝ մնացորդը
Տար ինձ լրութիւն ողբոր,
Ունենայի ուժ բաւական
Իրեն գործքերն երգելու:

“Վ իրգիլիոս, գեղեցիկ կը խօսիս, ըսաւ Մե-
տեղդ, բայց ափսոս որ — հասկըցուիլ չես ուզեր:
Ըսեմ յիսուն ողիմպիադներ անցան քու մահուա-
նէդ ի վեր *,” ու ես ամենեւին բան մ'ալ չեմ գի-
տեր ան սպասուած աստուածոց մանկանք վրայ՝ որն որ
մեր մեղաց հետքերը պիտ'որ ջնջէ, կըսես, ու երկիրս
աղատէ: Գիտեմ որ կայ Ասիայի մէջ Ժողովուրդ մը,
որն որ կը հաւատայ թէ Աստուած մը իրենց մէջ
ապրած ըլլայ, բայց ան ալ իր վերջը շատ գէշ լմըն-
ցուցեր է: Ե՛րբ պիտ'որ ըլլայ որ մարդկային միտքը
երկրիս վրայ ճշմարտութիւնը մէյ մը գտնայ: Աս
մարդկային միտքը առեղծուածի մը առջեւ յաւիտեան
պիտ'որ մնայ, ու Զրոյցի մը նայելով՝ անի յաւիտեան
պիտ'որ չկարենայ լուծել. եւ աս առեղծուածը նոյն
խել ինքն է,”:

Պէտ'որ շարունակուի:

ՊԵՏԱԳԵՆ

Անասնոց կոխակերտով գրօնանդ:

Առաջադէպն էր իմ կամ մեծարարութիւնը շատ հին
ատեններէ ի վեր զանազան աղգաց, մանաւանդ Յունաց
ու Հռոմայեցւոց մէջ սովորական զօսանաց ու զուարճու-
թեան հանգէս մըն էր: Աս վախճանի համար խեղճ ա-
նասունները երկայն ատեն աղէկ մը գիրցուելէն ու իրենց
բնական բիտերուն (մահմոզ) վրայ երկաթէ շինուած
մտրակներ կամ խթաններ ընդունելէն ետքը՝ մենամար-
տութեան համար կը կրթուէին, եւ մէյ մը որ իրենց
կուրծ հրապարակաւ կը սկսէին՝ անկէջ չէին դադրեր,
մինչեւ որ երկու մարտիկներուն մէկը պատերազմի դաշ-
տին վրայ շնչասպառ ոգեսպառ չէր մնար: Յունաց մէջ
աս հանգեսին կամ տեսարանին սկիզբ ընել տուողը Թե-
միստոկլէս Բթենացի զօրավարն եղաւ: Եղիանոս հռո-
մայեցի ճարտարաբանը իր «Պատմութիւն կենդանեաց»,
գրքին մէջ կը պատմէ թէ երբոր Թեմիստոկլէս Յունաց
զօրքերուն գլուխն անցած Պարսից դէմ պատերազմի
կ'երթար, ճամբան երկու խոշոր աքաղաղներու հանգիպե-
ցան, որոնք իրարու հետ սաստիկ կատաղութեամբ կը
կռուէին: Գրեթէ բոլոր բանակը կանկ առաւ ու այն տե-
արանը կը դիտէր: Թեմիստոկլէս ասկէջ առիթ առնե-

լով՝ իր զօրացն աս խօքերը խօսեցաւ. «Զօրակներ, որ-
չափ աւելի պատճառ ու գրգիռ ունիք՝ մեր ընելու պա-
տերազմին մէջ աւելի քաջ ու տեւող ըլլալու հիմայ՝ որ
ձեր աչօքը տեսաք՝ թէ անբան կենդանիները, որոնք ոչ
իրենց հայրենեաց սիրոյն համար ու ոչ իրենց անձնական
ազատութեան համար կռուոյ մէջ մտած էին, ամենայն
զօրութեամբ ու հնարիւք եւ սաստիկ արիւն թափելով
կը կռուին միայն իրենք զիրենք պաշտպանելու, մէկը մե-
կալէն չյաղթուելու համար», Ետքը երբոր Թեմիստո-
կլէս նոյն պատերազմէն յաղթութեամբ Աթէնք դարձաւ,
այս տեսած աքաղաղներուն կուրծ իբր բարի նշան ու գու-
շակ իր զինուոց յաջողութեանը սեպելով՝ անոր յիշա-
տակին համար՝ տարւէ տարի նոյն քաղքին թէպարտին
մէջ հրապարակաւ կատարուելու՝ աքաղաղներու մենա-
մարտութեան հանգէսը հաստատեց: Նոյն կռուոյն հա-
մար ընտրուած աքաղաղներուն կրակն ու կատաղութիւնը
սաստիկացնելու համար՝ իրենց կերակուրին մէջ առատ
սխտոր կը խառնէին, եւ պատերազմն աւելի արիւնուշտ
ընելու համար՝ անոնց ստուըններուն երկաթի մտրակներ
կ'անցընէին: —

Յունացմէ ետքը Հռոմայեցիք՝ (ամէն՝ աղէկ ու
գէշ՝ սովորութիւններու մէջ Յունաց նախանձորները
կամ հետեւողները, լաւ եւս՝ կապիկները), աս հանգե-
սը սկսան հրապարակաւ կատարել. ու անով այնչափ
կը զուարճանային կը զօսնուին, եւ այսպիսի անասնա-
կան կուրծներու վրայ այնչափ սէր ունէին, որ չէ թէ
միայն աքաղաղները, հապա նա եւ ուրիշ հաւեր ու
թռչուններ, ինչպէս լորամարգ (պլուրբճն), նոյն արիւ-
նահեղ մենամարտութեան մէջ կը կրթէին ու հրապա-
րակական կռուոյ կը հանէին: — Քրիստոնէութեան ժամա-
նակները՝ թէպէտ եւ հաղբ ու վարդապետք ի սկզբանէ
հետէ սկսան այսպիսի արիւնային հանգեսներու, առան-
ձինն աքաղաղներու մենամարտութեան դէմ սաստիկու-
թեամբ խօսիլ. ի վերայ այս ամենայնի նոյնը շարունա-
կուեցաւ, ու բոլոր միջին դարու մէջ յաճախ կատարուե-
լէն զատ մինչեւ հիմայ շատ տեղեր մեծ հաճութեամբ կը
կատարուի ու կը տեսնուի: Ամէն տեղերէն աւելի Անգ-
ղիայի մէջ յաճախած է աս անգթութեան հանգէսը.
գրեթէ շաբաթ չանցնիր՝ որ տեղ մը աքաղաղներու հրա-
պարակական կուրծ մը չկատարուի. եւ որ աւելի զարմա-
նալի . . . է՝ կը գտնուին այնպիսի մարդիկ՝ որ մէկ կամ
մէկալ աքաղաղն յաղթութեան դաքնին ընդունելուն
վրայ՝ իրարու հետ յառաջունէ գրաւագիր կ'ըլլան (պառ-
կը բռնեն): Աս տեղութեան մէջ աքաղաղներու կռուոյն
հանգէսը երբեմն կ'արգելուէր ու երբեմն թոյլ կը տը-
րուէր: Ատեն մը Անգղիայի թագաւորներէն ոմանք նոյն
կուրծ իրենց պալատին կամ թէպարտներու մէջ խա-
ղալ կու տային ու անով կը զօսնուին: Հենրիկոս Ը.
(1509—1547) թագաւորը Ուեադմինստրի պալատին մէջ
մեծ հանգեսով աքաղաղներու մենամարտութիւն ընել
կու տար, ուսկից թերեւս յառաջ եկած է աս տեսարա-
նին՝ «Թագաւորական զօսանք», (Royal diversion) ը-
սուիլը: Իսկ Կարսլոս Բ. (1649—1687) թագաւորը նոյն

*) Վիրգիլիոս՝ ուսկից վերի խօքերն առնուած են՝ Մեթի-
այի ժամանակն ալ չէր ապրեր. Քրիստոսի ծննդէն 19
տարի յառաջ մեռած էր:

կռուական հանդէսն ամէն տարի՝ «Արքունի թէատրոն աքաղաղաց», (Royal cockpit) ըստեալ խաղարանին մէջ կատարել կու տար: — Եւրոպայի մէջ Անգլիայէն դուրս նա եւ Հոլանտայի, Պորուշի ու Իտալիայի մէջ տեղ տեղ աքաղաղաց կուր հրապարակական զբօսանքներուն մէկն է: Իսկ Եւրոպայէն դուրս՝ Ճենաստանի ու Պարսկաստանի մէջ, մինչեւ Հնդկաստանի Եաւա կղզւոյն վրայ ու Ամերիկայի Հնդկիներուն մէջ ալ խեղճ աքաղաղները պէտք է որ մենամարտութիւն ընեն, արիւն թափեն՝ որ այն որպիսի եւ իցէ մարդիկ զբօսնուն ու զուարճանան: —


Աքաղաղներու արիւնահեղ կռիւր թողնէք, անցնինք սահեթոս չարչարանաց խաղէն Գաղղիայի մէջ՝ չէ թէ հանդիսատես ըլլալու համար, (ծն անդր.) հապա այնպիսի քաղաքականացեալ աղբիւն ու երկրին մէջ այսպիսի անարդ ու անգութ տեսարանով զուարճացողներուն վրայ զարմանալու համար: Աս բարբարոսական զբօսանաց հանդէսին ատենը խաղացողներն ու հանդիսատեսները բոլորակի ձեւով կը ժողովուին կը կենան. աս բոլորակին կամ շրջանակին մէջ տեղը սագ մը ոտուրնէն հաստ չուանի մը կապուած կախուած է, չուանին երկու ծայրերն ալ երկու ցիցերու կամ ծառերու կապուած են: Ո՛վ որ չարչարանաց խաղը պիտ'որ սկսի՝ իր աչուրները կապել՝ գոցել կու տայ, իր ձեռքը դանակ կամ սուր մը կը տրուի, զորն որ քանի մը հեղ սագին անգին կը խաղցնէ կը շրջացնէ: Երբոր իրեն ձայն կը տրուի՝ որ յառաջ շարժի, ան ատեն բուն խաղը կը սկսի. նոյն աչքը կապուած մարդը հանդարտ քայլերով՝ իբր խարխափելով յառաջ կ'երթայ՝ կախուած սագը գտնելու կը ջանայ ու ձեռքի զէնքովը դէպ ան կողմը հարուած մը կ'ընէ՝ ուր կը կարծէ որ սագին կրնայ հանդիպցնել: Աս բանիս մէջ իրեն օգնութիւն մ'ընելու համար հանդիսատեսաց առջեւը թմբկահար մը կը կենայ, որն որ իր թմբուկը (պափու) զարնելով՝ անոր կ'իմացնէ՝ թէ խեղճ անատունին մօտեցած է թէ անկէց հեռացած: Հասարակօրէն կրնայ նա եւ ժողովուած բազմութեան ծափահարութենէն, կամ աղէկ, աղէկ, աղէկ, աղէկ պոռալէն իրեն կախուած սագին մօտ ըլլալը հասկնալ: Թէ որ անոք անօգնական զոհ հարուած մ'ընդունելու ըլլայ՝ բոլոր հանդիսատեսները մէկ բերան բարձր ու անկարգ աղաղակաւ ու ծիծաղով մը օդը կը թնդացնեն. իսկ անմեղ վիրաւորեալը ցաւէն ու անձկութենէն տանջուելով կը դալարի, գլուխը մէկ դի մէկալ դի կը պարտցնէ՝ իբր օգնութիւն մը խնդրելու համար: Ետքը ուրիշ տանջող մը աչուրները կապուած ասպարէզ կ'ելլէ, ու իր յառաջընթացին փորձերը կ'ընէ. եւ այսպէս քանի մը հոգի նոյն փորձերը կը կրկնեն, մինչեւ որ անոնց մէկն իր հարուածը բազմաչարչար անասնոյն վիզը հանդիպցնէ ու գլուխը կտրէ վարձգէ, որն որ երկայն ատենի կը կարօտի. ու աս ատենը քարասիրտ բազմութիւնը արիւններու մէջ թաթղուած սագին պէսպէս շարժմունքներուն եւ թուր ու դանակ խաղցնողներուն յաջող ու անյաջող շարժումներին ու հարուածքին տեսքով կը զբօսնուն ու կը զուարճանան: Ասպարէզ ելլողներուն մէջէն ո՛վ որ գլխաւոր հարուածը

կ'ընէ ու կախուած սագին գլուխը կը կտրէ, անոր փղիկ փղիկ եղած մարմինն ալ ինք կ'առնէ ու կ'երթայ իր բաշկամներուն հետ անոր խորվուածը կ'ուտէ: Աս արիւնային խաղը հասարակօրէն աշնան սկիզբները կը սկսի, ու Գաղղիայի ամէն տեղերէն աւելի՝ Մառաղ ու Արտէն գաւառներուն մէջ յաճախ կը կատարուի: — Հոս գուցէ ընթերցողները յանկարծ կը յիշեն, որ ատենօք՝ (Քրիստոսէ 387 տարի առաջ) Գաղղիացիք Հռոմ քաղաքն առնէին ետքը, գիշեր մը ամենայն լուութեամբ, անձայն ու անշշուկ՝ կապիտոլիոնն ալ առնելու եւ անով իրենց յաղթութիւնը կատարելու վայրկենին՝ հոս գտնուող սագերուն յանկարծ սաստիկ կանչելէն՝ պահապաններն արթննալով՝ զիրենք վաճառած ու աշխատանքին պարապի հանած են*: Ուստի եւ կրնայ ամէն մարդ կարծել՝ որ Գաղղիացիք իրենց մատնացը դէմ սրտերնուն մէջ մշտնջենաւոր թշնամութեան ոգին պահած ըլլալով, ատեն ատեն աս վերը յիշուած չարչարանքով անոնցմէ վրէժ առնելու կը ջանան: —

Ս'երը գրեցինք՝ որ աքաղաղներու կռիւն ու արիւնհեղութիւնը ճենաստանաց ալ զբօսալի տեսարան ու զուարճութեամբ ատեն անցնելու խաղ մըն է: Բայց աս երկրին մեծերը, պատրիկներն ու նախարարները աս զբօսանքը հասարակ ժողովրդեան թող տալով, իրենք իրենց զարգարուն սենեակներուն ու սրահներուն մէջ հանդիստ նստած, ուրիշ տեսակ անասնիկի մը արիւնահեղ կռուովը չէ թէ միայն կը զբօսնուն, հապա նոյն անմեղ անասնիկներուն մէկուն կամ մէկալին յաղթելուն կամ յաղթուելուն վրայ իրարու հետ զրաւադիր ըլլալու, իբր թէ դրամով խաղ խաղալու ազնուական առիթ մը կը գրտնեն: Աս զարմանալի (զգուշի) նորանշան կռուոյն ստորագրութիւնն ամէն կարեւոր պարագաներով ականատես Անգլիացոյ մը պատմութենէն առնելով հոս կը գնենք: «Մեծ սենեկի մը մէջ տեղը՝ շրջանակները փղովկեայ քանդակներով զարդարուած՝ փառաւոր սեղան մը դրուած էր. աս սեղանին վրայ մեծ ճենապակեայ (Ֆալֆուրէ) սկաւառակ մը կար, որուն աղւոր ու փափուկ սպիտակ բայց տկար ծիրանեղոյն կարմիրով խառնուած գոյնն իրեն հաճոյական տեսիլ մը կու տար: Աս սեղանին բոլորողը ճենաստանի մեծամեծներէն 15—20 հոգի ժողովուած կեցած էին, որոնց կերպարանքն ու շարժմունքը յայտնի կը ցուցնէին՝ որ անհամբերութեամբ բանի մը կը սպասէին: Նոյն սեղանին երկու դին դիմաց դիմաց երկու ծառաներ կեցած էին, որոնք իբրեւ երկու ասպարէզ ելլելու պատրաստ ըլլող մենամարտիկներուն օգնականները կը սեպուէին, ուստի եւ երկուքն ալ ձեռքերին մէջ մէկ յարդի ցօղուն կամ եղեգնիկ բռնած էին: Երբ որ կռիւը կամ մենամարտութեան խաղը սկսելուն նշանը արուեցաւ, երկու ուրիշ ծառաներ արտորոնօք բազմութեան մէջէն անցնելով եկան սեղանին մօտեցան. երկուքին ալ ձեռքը մէջ մէկ՝ քանդակներով զարդարուած փղովկե աղւոր պղտիկ արկղիկ կար, որոնք խնկանոցի (պոստոստոս) ծակոտէն կափարիչին նման


* Տես Ռոլէն, Պատմ. Հռոմ. Հատ. Ա. Էջ. 572—573.

արտաբուսական նմանություն միևնույնով յօրինուած են: Գերեզմանատան մէջ տեղը բարձր բուրգ (pyramide=պէ-րճ) մը կայ, որուն չորս կողմերը վարէն մինչեւ իր կատարը աւելն հասակի մեռելոց կմակըներով ծածկուած են, իսկ իր գագաթը հսկայի մը կմակը կանգուն կեցած է՝ մէկ ձեռքը գերանդի (ծրագ) մը ու միւս ձեռքը՝ աւաղէ ժամացոյց մը բռնած, որոնց երկուքն ալ մահուան պատկերը կը ներկայացընեն:



Հոնտոն՝ առաստախանի մը գործանոցը:

Անգղիայի առաստախան կամ աղուայի բժիշկ (dentiste) մը իր խնամքը կամ գործանոցն այնպէս յօրինեց ու կարգի դրաւ՝ որ աղուանին բժշկել կամ հանել տալու համար իրեն եկողները թէ վախնալու եւ թէ քաջալուրութեան առիթ կը գտնեն: Աս գործանոցին յատակն ալ պատերն ալ բոլոր միւսոնն նկարներու նման՝ այլ եւ այլ մարդիկներէ հանուած աղուաններէ յօրինեալ ձեւեր ու նկարներ կը կազմեն: Ան աթոռին յենարանին երեսը՝ որուն վրայ աղուայ հանել տալու եկողները կը նստին՝ նոյնպէս բուն մարդկան աղուաններէ յօրինուած նշանադրերով աս խօսքերը քանդակուած յեռուած են. Հա՛մբէր-մի-նն ա՛մն ցա-ւեր-ն կը յաղ-լէ:



ԲՈՎԱՆԳԱՎՈՐԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐԻԵՍՏԻՑ

Աշխարհագրութեան վրայ:

(Հարսնախո-բիւն):

Երրորդայի տէրութեանց բաժանումը:

Հիւսիսային կողմի տէրութիւնն է:

Ա. Բրիտանական կղզիք, 5720 1/2 քա. մղ. 28 1/2 միլիոն բնակիչ:

Բրիտանական տէրութիւնը չորս գլխաւոր մաս կը բաժնուի.

1. Անգլիա, մայրաքաղաքը Լոնտոն՝ թայմը գետին քով 2 միլիոն բնակչով: Մէկալ գլխաւոր քաղաքներն են՝ Լիվըրպուլ, Մէնչեսթըր, Պրիմնկէմ, Խօք, Պրիսթըլ, Օքսֆորտ, եւ այլն:

2. Սկոթլան, մայրաքաղ. Էտինպուրկ 160-000 բնակ: Գլխաւոր քաղ. Էպսթոն, Կլեկոյ, եւ այլն:

3. Իրլանտա, մայրաքաղ. Տեպլին 285-000 բնակչով: Գլխաւոր քաղաքներն են՝ Լիմըր, Բոք:

4. Կղզիներ, զոր օրինակ Հէթլէնտ, Օքստեան կ.ք., Հեկլայնա, Մալթա, Յոնիական կղզիք: Ճիպրալթար քաղաքն ալ որն որ համանուն նեղուցին քովն է՝ Անգլիացւոց կը վերաբերի:

Բ. Տանիմարա կամ Դանիա 2861 քա. մղ. 2-536,000 բնակիչ:

Աս թագաւորութիւնը երեք մաս կը բաժնուի.

1. Եւթլանտ, գլխաւոր քաղաքներ, Ալգորպ, Ալպորկ Հէդլուիկ:

2. Գերմանիայի դաշնակցութեան մասերը, այսինքն Հոլ-լանտ եւ Լաւենպուրկ:

3. Կղզիներ, Սէլանտ, որուն մէջն է տէրութեան մայրաքաղաքը Բոփհենհալ 144-000 բն.: Ֆիւնէն, Ֆարէորեան կ.ք., եւ Իսլանտ, որուն մայրաքաղաքն է Ռայքեալիք:

Գ. Սկանինաւեան թերակղզին 13-804 քա. մղ., 5-100,000 բնակիչ:

Աս տէրութիւնն երկու իրարու հետ միացած թագաւորութիւններէ կը կազմուի, որոնց անուններն են Հոլէտ եւ Նորուեկիա: Բոլոր տէրութեան եւ մասնաւորապէս Հոլէտի

մասին մայրաքաղաքն է Սթոքհոլմ 100,000 բն.: Իսկ Նորուեկիայի մայրաքաղաքն է Գրիսթիանա:

Դ. Ռուսիա, Կայսրութիւն, 98-830 քա. մղ. 62 միլիոն բնակիչ:

Ռուսի Եւրոպայի մասը դանազան՝ փոքր կուսակալութեանց կը բաժնուի: Գլխաւոր բաժանումներն են Մեծ Ռուսաստան, Փոքր Ռուսաստան, Կաւկասեան գաւառք, Պոլոնիա կամ Լեհաստան, հարաւային Ռուսաստան, արեւմտեան Ռուսաստան, եւ այլն: Ասոնց ամէն մէկն ալ զանազան գաւառներ կը բաժնուին:

Բոլոր կայսրութեան մայրաքաղաքն է Պետրոբուրգ 532-000 բն., Նեւա գետին քով: Մէկալ երեւելի քաղաքներն են Մոսկաւ, տէրութեան հին մայրաքաղաքը, Օտեսա, Բիւէվ, Արխանգէլ, Աժտերիան, Գառնեց, Վարշա, եւ այլն:

Եւրոպային մէջն մասին տէրութիւնները:

Ե. Գաղղիա, Կայսրութիւն. 10-000 քա. մղ. 36-040,000 բնակիչ:

Մայրաքաղաքը Փարիզ՝ Սէն գետին քով 1-600-000 բն.: Մէկալ երեւելի քաղաքներն են Լիոն, Սթրասպուր, Պորտոյ, Ռուան, Մարսէյլ, Օրլէան, Ռէնս, Ալինսոն, Կանթ, Թուլոն. Գորսիքա կղզւոյն վրայ Այաչիպոյ:

Զ. Բելգիա, Թագաւորութիւն. 536 1/2 քա. մղ. 4-590,000 բնակիչ:

Մայրաքաղաքը Պրիւսսէլ 252-000 բն.: Մէկալ երեւելի քաղաքներն են, Անվէր, Կանտ (Կէնթ), Լիէժ կամ Լիւթ-Թիհ, Օսթէնտէ, եւ այլն:

Է. Հոլանտա, Թագաւորութիւն. 640 քա. մղ. 3-434,000 բնակիչ:

Մայրաքաղաքը Հաակ 68-000 բն.: Երեւելի քաղաքներ են Ամսթերտամ, 251-000 բն., Ռոթթերտամ, Ութրէհթ, եւ այլն:

Ը. Հելլենտիա, հասարակապետական դաշնակցութիւնն 720 քա. մղ. երկիր ու 2-400,000 բնակիչ ունի:

Աս դաշնակցութիւնը 22 փոքր հասարակապետութիւններէ կը կազմուի: Գլխաւոր քաղաքներն երեք հատ են, Պեռն, Լուցեռն, ու Յիւրիհ: Մէկալ երեւելի քաղաքներն են Կէնթ, Նեոշաթէլ, Պազէլ, եւ այլն:

Թ. Աւստրիա, Կայսրութիւն. 11-738 քա. մղ. երկիր ու 35-100,000 բնակիչ ունի:

Աս կայսրութիւնը զանազան հին թագաւորութիւններէ, գաւառներէ, եւ այլն, կը կազմուի, որոնց անուններն են,

Ա. 1. Աւստրիայի արքիդսութիւն: 2. Բոհէմիա: 3. Մորաւիա: 4. Սիլեզիա: 5. Սթիրիա կամ Հիւպերմարք: 6. Իլլիրիա: 7. Թիրոլ: Ասոնք ամէնն ալ Գերմանիայի դաշնակցութեան մէջն են:

Բ. Գերմանիայէն դուրս մնացած գաւառներն են՝ 8. Մաճարաստան: 9. Կալիցիա: 10. Պոլոնիան: 11. Աւստիա կամ Թրանսիլուանիա: 12. Չինուորական սահմանագլուխ: 13. Խուսաղաստան: 14. Սլաւոնիա: 15. Դալմատիա եւ 16. Լոմպարտեան-Վենետիկ:

Բոլոր կայսրութեան մայրաքաղաքն է Վիէննա՝ Դանուբ գետին քով 500-000 բն.: Մէկալ երեւելի քաղաքներն են Փրակ, Պրիւն, Թեշէն, Կրաց, Լայպպի, Ինսպրուք. աս քաղաքներն առջի կարգի կը վերաբերին:

Երկրորդին կը վերաբերին Փէշթ, Փրեզպուրկ, Լեմպերկ, Բրաւա, Չերնովց, Հերմանշթատ, Պաշպալով, Կեռլա, Ալլամ, Իստէկ, Ծարա, Վենետիկ, Վերոնա, Մանթովա, եւ այլն:

Ժ. Գերմանիայի դաշնակցութիւն. 11-472 քա. մղ. երկիր ու 41-823,750 բնակիչ ունի:

Աս դաշնակցութեան մէջ շատ մեծ ու փոքր տէրութիւններ կը գտնուին, այսինքն, Աւստրիայի գերմանական գաւառները. Բրիտանիայի թագաւորութեան մեծ մասը, Սաքսոնիայի, Հաննովերի, Պալէերայի, Վիւրթեմպերկի թագաւորու-

թիւները. Պատնի, Օլտեմպուրի, Մեքլենպուրի, Վայմարի, Հեսսեն-Տարմլիմատի մեծ դքսութիւնները, եւ այլն:

Բրունսիայի մայրաքաղաքն է՝ Պերլին 410.000 բն., մէկալ մեծ քաղաքներն են՝ Պրեզլա, Տանցիկ, Մակտեպուրի, Բոլոնիա, Թրիեր եւ այլն:

Պալիերայի մայրաքաղաքն է՝ Միւնխեն, մէկալ երեւելի քաղաքներն են՝ Ակսպուրկ, Ռեկենսպուրկ, Նիւռնպերկ, Շփայեր, եւ այլն:

Սաքսոնիայի մայրաքաղաքն է՝ Տրեդտեն, մէկալ քաղաքներն են Լայպցիկ (Լիբիցքա), Ֆրայպերկ, եւ այլն:

Վիւրթեմպերկի մայրաքաղաքն է՝ Շփուլկարթ:

Հաննովերի մայրաքաղաքն է՝ Հաննովեր:

Պատենի մեծ դքսութեան մայրաքաղաքն է՝ Քարլսրուհէ, մէկալ քաղաքներն են՝ Մանհայմ, Վերթհայմ, Բոսլմանց, եւ այլն:

Գերմանիայի մէկալ երեւելի քաղաքներն են, Մայնց (Մոգունտիա), Վորմ, Վայմար, Համպուրկ, Պրեմն, Լիւպեք եւ Ֆրանքֆուրթ. աս վերջին չորս քաղաքներն ազատ հասարակապետութիւններ են:

Հարաւային և արևմտեան ինքնիշխանութիւններ:

ԺԱ. Փորթուկալ, Թագաւորութիւն 1714 թ. մը. 4 միլիոն բնակիչ:

Մայրաքաղաքը, Լիսապոն 280.000 բն., մէկալ երեւելի քաղաքներն են Օփորթոյ, Բոյիմպրա, Թաւիրա:

ԺԲ. Սպանիա, Թագաւորութիւն 8447 թ. մը. 12 միլիոն բնակիչ:

Աս Թագաւորութիւններէ ու գաւառներէ կը բաղկանայ, Նոր ու հին Գալիսիա, Գալիսիա, Նաւարա, Լեոն, Կրանտա, եւ այլն: Մայրաքաղաքն է Մատրիս 206.000 բնակիչով: Մէկալ գլխաւոր քաղաքներն են՝ Պարսելոնա, Սեվիլիա, Վալենսիա, Կրանտա, Սանթեակոյ, Բորտովա, Մալաղա, Բատիլ, Բարթաղենա, եւ այլն:

ԺԳ. Իտալիա 5798 թ. մը. 24.812.000 բնակիչ:

Իտալիա զանազան տէրութիւններ կը բաժնուի,

1. Սարաենիայի Թագաւորութիւն. մայրաքաղ. Թուրին. երեւելի քաղաքներն են Միլան, Ճենովա եւ այլն:

2. Նափոլիի Թագաւորութիւն. մայրաքաղ. Նափոլի, երեւելի քաղաքներն են Փալերմոյ, Սալեռնոյ, Թարանթոյ, Բարանի, Սիրակուզա, եւ այլն:

3. Հռոմայի տէրութիւն. մայրաքաղ. Հռոմ. մէկալ քաղաքներն են Չիլիթալէքքիա, Անգոնա, Պոլոնիա, Ֆերրաւա, Լորեթոյ:

4. Թոսկանայի մեծ դքսութիւն. մայրաքաղ. Ֆլորենցա, երեւելի քաղաքներն են Փիզա, Լիվոռնոյ, եւ այլն:

5. Փարմա, դքսութիւն. մայրաքաղ. Փարմա:

6. Մոտենա, դքսութիւն. մայրաքաղ. Մոտենա:

7. Ս. Մարինոյի հասարակապետութիւն:

8. Լոմպարդիա-Վենետիկ, տես Աւստրիայի մէջ:

ԺԴ. Տաճկաստան, Կայսրութիւն. 9832 թ. մը. 12½ միլիոն բնակիչ:

Աս տէրութիւնը զանազան գաւառներ կը բաժնուի:

1. Մոլտավիա, մայրաքաղաքը Եաշ:

2. Վալաքիա " Պուրէշ:

3. Սերպիա " Պեկրատ:

4. Պուկարիա " Սոֆիա:

5. Թեսալիա " Լարիսսա:

6. Պոնիա " Պոնա Սերայ:

7. Ալպանիա " Եանինա:

8. Մակեդոնիա " Սկիպիք:

9. Կղզիք " Բանտիա, Լեմնոս, Բաս-

թոյ, եւ այլն:

10. Բուլղարիա " Կոստանդնուպոլիս,

որն որ բոլոր տէրութեան մայրաքաղաքն է, ու 1 միլիոնի չափ բնակիչ ունի: Մէկալ երեւելի քաղաքներն են Ադրիանուպոլ-

լիս (Էտրնէ), Ֆիլիպպէ, Կալաց, Բուսճուք, Վարնա, եւ այլն:

ԺԵ. Յունաստան, Թագաւորութիւն. 898½ թ. մը. 1.000.000 բնակիչ:

Աս Թագաւորութիւնն երկու գլխաւոր մաս ունի, այսինքն Պեղոպոնիսոս (Մորէա) եւ Լիվատիա: — Մայրաքաղաքն է Աթէնք. մէկալ գլխաւոր քաղաքներն ու կղզիներն են՝ Նաւփլիս, Փաթրաս, Մոթոն, Նաւարին, Կորնթոս, Սպարտա (Միսթրա): Սերա կղզին, Եւպէա կամ Նեկրոփոնթէ, Սալամիս, Էլինա, եւ այլն:

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ո Ն Ե Կ Ո Ն

Հոգեշունչ երգիոն:

Ինչ որ շոգւոյ հիմակուան առենը ըրած յառաջագիտութեան ու՝ ամենեւին անհրաժեշտ պայման ու դաշինք չճանչնալով՝ անխտիր ամէն բանի մէջ խառնուելուն միջամուտ ըլլալուն վրայ՝ անոր պարսաւախօսները մարգարէական հոգւով կը զրուցէին՝ վերջապէս ստուգուեցաւ. այսինքն այս ամենաշարժ տարրը կամ ոգին երաժշտական գործիք փչելու եւ հնչեցնելու պաշտօնին մէջ ալ մտաւ: Անգղիայի Սիտրնհէմ քաղաքը կանգնուած ապակիէ պալատին մէջ քանի մ'առնէն ի վեր հրապարակաւ տեսնուելու արժանի միջնաներուն կարգը՝ Կաղիպէ (Գեղեցկաձայն) անունով երաժշտական գործիք մ'ալ հանգիստեաներուն առջեւը դրուած է, որն որ իր ծննդեան տեղէն հիւսիսային Ամերիկայէն անցած տարի Անգղիա բերուեցաւ: Աս գործիքը կամ նուագարանը լափշա՛նք երգիին մըն է, որուն փողերը՝ պղինձէ են, եւ ուրիշ հասարակ երգիօններու պէս ստեղանց կամ մատանց (clavier) միջնորդութեամբ կը զարնուի: Հոգին՝ նուագարանին տակը գետնին վրայ դրուած կաթսայէ մը կ'ելլէ ու երկու զանններու մէջն անցնելով փողերուն մէջ կը մտնէ: Աս ներկայ նուագարանը պղտիկ է ու քիչ շոգւոյ կը կարօտի, որովհետեւ զարնուելու կամ հնչելու համար՝ մէկ քառակուսի մասնաչափի վրայ՝ միայն հինգ լիտրի (իւր 2¼ օխա) կամ 2½ քիլոկրամ չափ հասարակ երգիօններ չունի: Բայց կրնայ այսպիսի նուագարաններ այնչափ մեծութեամբ շինուիլ, որ իրենց մէջ ամէն մէկ քառակուսի մատնաչափի համար շոգւոյ զօրութիւնը մինչեւ 150 լիտրի ծանրութեան չափ ծնշում ընելու կարող ըլլայ, ու իրենցմէ՝ հիմակուան նուագարանէն ելած հնչուններ երեսնապատիկ աւելի զօրաւոր ու սաստիկ հնչուն ելլէ: Այսպիսի ու այսչափ սաստակութեամբ ելած հնչունը՝ ինչպէս հմուտը կը վկայեն մինչեւ տասնութիւն Անգղիական մըն հեռաւորութեամբ տեղեր կը հասնի: Հիւսիսային Ամերիկայի միաբանեալ Նահանգաց Ս. Լուի ու Նոր Օրլէան քաղաքներուն մէջ այսպիսի շոգեշունչ երգիօններ կամ Կաղիպէներ՝ բարձր աշտարակի վրայ կախուած զանգակի պէս՝ կը գործածուին: Նա եւ Բրիտանական հիւսիսային Ամերիկայի Նոր Սկոտիա գաղթականութեան Լիվըրբուլ քաղաքին ծովեզերաց վրայ լուսատու աշտարակ մը կայ, որուն վրայէն այսպիսի շոգեշունչ երգիօնի մը հնչունովը հեռու տեղեր ազդարար նշան կը տրուի: Մշտն եղած գիշերները աս շոգեշունչ երգիօնին հնչունովն ամէն մէկ վայրկեան չորս հեղձ ծովու վրայ ըլլող նաւերուն նշան կը տրուի ու ազդարարութիւն կ'ըլլայ թէ ցամաքի մօտ են:

Սաթ կպցընելու միջոց:

Երկու կտոր սաթ (սփերիկ) իրարու հետ միացնելու՝ կամ կպցընելու համար պէտք է զանոնք խաբիչ տնկաղի (ֆալէթ Բոփրու) մէջ կակղցընելէն ետքը՝ դեռ տաք եղած առնենին իրարու հետ հաստատ ու ամուր միացած բռնել՝ կամ ծնշել: Աս միջոցով իրարու հետ անանկ աղէկ կը կպչին կը միանան որ միացած ըլլանուն եւ ոչ մէկ փոքր հետք կը տեսնուի: